



California's protection & advocacy system

Նոր կանոններ IHSS-ի համար. պաշտպանիչ հսկողության ծառայությունների համաչափ բաշխման վերացումը

Չրապ. #7163.10 Armenian, Դեկտեմբեր 2020թ.

Այս հրապարակումը մեկնաբանում է Տևային օժանդակող ծառայությունների (անգլ. In-Home Supportive Services, IHSS) շրջանակում պաշտպանիչ հսկողության ծառայությունների համաչափ բաշխման վերացումը, ինչը հնարավոր է դարձել Կալիֆորնիայի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպության շահերի պաշտպանության արդյունքում:

Պաշտպանիչ հսկողության համաչափ բաշխման վերացումը

Պաշտպանիչ հսկողությունը Տևային օժանդակող ծառայություն է (IHSS)՝ նախատեսված այն անձանց համար, որոնք մտային տկարության կամ հոգեկան հիվանդության պատճառով ունեն օրական 24-ժամյա հսկողության կարիք, ինչը կպաշտպանի նրանց վնասվածք ստանալուց, վտանգի ենթարկվելուց կամ դժբախտ պատահարներից: IHSS ծառայության ինսամակալը կարող է վճարվել՝ հաշմանդամություն ունեցող երեխային կամ մեծահասակին հետևելու և հսկելու համար այն դեպքում, երբ տվյալ անձը կարող է ապահով կերպով մնալ տանը, եթե տրամադրվի 24-ժամյա հսկողություն:¹ Մինչև 2020թ. հուլիսի 1-ը նույն տանը պաշտպանիչ հսկողության երկու կամ ավելի շահառու ապրելու պարագայում պաշտպանիչ հսկողության կարիքը համարվում էր ընդհանուր բավարարված, և ժամերն ավտոմատ բաշխվում էին

¹ California Department of Social Services Manual of Policies and Procedures (“MPP”) § 30-757.17.

համաչափորեն:² Սկսած 2020թ. հուլիսի 1-ից՝ նույն տանն ապրող տարբեր շահառուների պաշտպանիչ հսկողության ժամերն այլևս չեն կարող համաչափորեն բաշխվել:³

Ծառայությունների փոփոխումը

Վարչաշրջաններից պահանջվում է հնարավորինս շուտ դադարեցնել IHSS պաշտպանիչ հսկողության ծառայությունների տրամադրումը:⁴ Ընթացիկ գործերի համար վարչաշրջանները պետք է դադարեցնեն պաշտպանիչ հսկողության ծառայությունների մատուցումը ամենաուշը մինչև հաջորդ պլանավորված վերազնահատումը:⁵ Եթե շահառուները (կամ նրանց լիազորված ներկայացուցիչը) դիմեն իրենց գործով պաշտպանիչ հսկողության համաչափ բաշխումը դադարեցնելու համար, վարչաշրջանները պետք է անմիջապես բավարարեն այն:⁶

Ծառայությունների համաչափ բաշխումը շարունակվելու դեպքում IHSS պաշտպանիչ հսկողության շահառուները կամ նրանց լիազորված ներկայացուցիչը կարող են կապվել վարչաշրջանի հետ: Վարչաշրջանի սոցիալական ապահովության ծառայությունների գրասենյակների ցանկը տե՛ս այստեղ՝ <https://www.cdss.ca.gov/county-offices>

Աշխատանքային շաբաթվա սահմանափակումները

Պաշտպանիչ հսկողության համաչափ բաշխման վերացման արդյունքում IHSS ժամերը կարող են ավելանալ: Կան IHSS ինամակալի շաբաթական աշխատանքային ժամերի քանակի սահմանափակումներ: Միայն մեկ շահառուի համար աշխատող ինամակալը չի կարող շաբաթական աշխատել 70 ժամ և 45 րոպեից ավելի:⁷ Երկու կամ ավելի

² MPP § 30-763.331; All-County Letter No. 20-111 (“ACL 20-111”), հղում՝ <https://www.cdss.ca.gov/Portals/9/Additional-Resources/Letters-and-Notices/ACLs/2020/20-111.pdf>

³ ACL 20-111 at 1.

⁴ ACL 20-111 at 2.

⁵ ACL 20-111 at 2.

⁶ ACL 20-111 at 2.

⁷ Welf. & Inst. Code §§ 12300.4, 12301.1.

շահառուների համար աշխատող խնամակալը չի կարող շաբաթական աշխատել 66 ժամից ավելի:⁸ Պաշտպանիչ հսկողության ծառայությունների մի քանի շահառու ունեցող տնային տնտեսությունները ժամերի ավելացման արդյունքում կարող են լրացուցիչ խնամակալների կարիք ունենալ:

Որոշակի չափանիշների համապատասխանող IHSS խնամակալները կարող են դիմել աշխատանքային շաբաթվա սահմանափակումից ազատման համար, ինչը թույլ կտա նրանց ավելի շատ ժամեր աշխատել: Սահմանափակումից ազատման դեպքում խնամակալները կարող են աշխատել շաբաթական մինչև 90 ժամ՝ չգերազանցելով ամսական 360 ժամը:⁹ IHSS խնամակալների՝ աշխատանքային շաբաթվա սահմանափակումից ազատման մասին մանրամասն տե՛ս այս հղումով՝ <https://www.disabilityrightsca.org/publications/recent-changes-to-in-home-supportive-services-ihss-and-waiver-personal-care-services>:

Նպաստների հետադարձ վճարումը

Ժամերի համաչափ բաշխմամբ IHSS պաշտպանիչ հսկողության ծառայություններ ստացող շահառուները կարող են ստանալ նպաստները հետադարձ վճարմամբ՝ 2020թ. հուլիսի 1-ից հետո մատուցված ծառայությունների ժամերը ճշգրտվելուց հետո: Նպաստների հետադարձ վճարման եղանակը կարող է տարբեր լինել՝ կախված վարչաշրջաններից: Որոշ վարչաշրջաններում այդ լրացուցիչ ժամերի համար կարող են չեկեր հատկացնել անմիջապես շահառուին: Այլ վարչաշրջաններում կարող են լրացուցիչ ժամաքանակ դուրս գրել խնամակալների համար: Եթե շահառուն նախընտրում է, որ վճարումը կատարվի անմիջապես իր խնամակալին, կարող է դիմել իր տարածքային վարչաշրջանին:

Պետական նպաստներ ստացող և հետադարձ վճարման չեկ ստացած IHSS շահառուներից հնարավոր է պահանջվի՝ ներկայացնել վճարման հաշվետվությունը իր պետական նպաստները հատկացնող գործակալությանը: Medi-Cal-ի շահառուները պետք է վճարման հաշվետվություն ներկայացնեն վարչաշրջանի սոցիալական

⁸ Welf. & Inst. Code §§ 12300.4, 12301.1

⁹ All-County Letter No. 16-07, (“ACL 16-07”), available at <http://www.cdss.ca.gov/lettersnotices/entres/getinfo/acl/2016/16-07.pdf>.

ապահովության բաժնին՝ այն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:¹⁰ Սոցիալական ապահովության հավելյալ եկամուտ (SSI) ունեցող շահառուները պետք է վճարման հաշվետվությունը ներկայացնեն Սոցիալական ապահովության վարչությանը այն ստանալուն պես, սակայն ամենաուշը՝ մինչև վճարումը ստանալու ամսվան հաջորդող ամսվա 10-ը:¹¹

IHSS նպաստների միանվագ հետադարձ վճարումների մասին հաշվետվություն ներկայացնելու համար շահառուները պետք է իրենց վարչաշրջանի Medi-Cal-ի գրասենյակին (և SSA-ի գրասենյակին, եթե ստանում են SSI) ուղարկեն նամակ՝ բացատրելով հետևյալը.

- ով է ստացել վճարումը, և որքան է կազմել այն
- այն, որ գումարը նախատեսվել է IHSS խնամակալի վարձատրության համար և վճարվել է համաձայն ACL 20-111-ի
- որ խնամակալին է վճարվել գումարը
- ինչու է վճարումը արտոնյալ (եթե կիրառելի է), օրինակ,

Տեսալին օժանդակող ծառայությունների (առօրյա կենցաղային գործեր, հերթաապահություն, տնային գործեր) վճարումները նախատեսված են բժշկական կամ սոցիալական ծառայությունների վճարման համար և չեն համարվում եկամուտ, երբ վճարվում են անմիջապես իրավունակ անձին՝ ծառայությունների դիմաց վճարման համար (POMS. SI 00815.050): Գումարը, արդեն տրամադրված ծառայությունների վարկի մարման նպատակով օգտագործվելու դեպքում, նույնպես գումարը չի համարվում եկամուտ կամ ռեսուրս («Ձեր փոխառած գումարը...եկամուտ չէ»: 20 C.F.R. § 416.1103(f)):

Միանվագ վճարումների և Medi-Cal-ի իրավունակության մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <https://www.disabilityrightsca.org/publications/lump-sum-payments-and-medi-cal-eligibility>

Միանվագ վճարումների և սոցիալական ապահովության հավելյալ եկամտի (SSI) իրավունակության մասին տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <https://www.disabilityrightsca.org/publications/lump-sum-payments-and-ssi-eligibility>

¹⁰ Welf. & Inst. Code 14005.37(h); 22 C.C.R § 50185(a)(4)

¹¹ 20 C.F.R § 416.714(a)

Medi-Cal-ի ձեր տարածքային գրասենյակը գտնելու համար անցեք հետևյալ հղումով՝ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx>

Սոցիալական ապահովության վարչության ձեր տարածքային գրասենյակը գտնելու համար անցեք հետևյալ հղումով <https://www.ssa.gov/locator/>

IHSS պաշտպանիչ հսկողության համաչափ բաշխման վերացման վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում կապվեք DRC-ի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (800) 776-5746: